



# ՔԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԹ · 1870 — ՔՍԱՆԵՐՈՐԴ · ՈՒԹԵՐՈՐԴ · ՏԱՐԻ · — ՀՈԿՏԵՄԲԵՐ

## ԿՍՄԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԵԱՆ

(Տես Երես 257)

Վարժապետը վախէն միշտ հառաչաւ նաց մէջ էր, ձեռքերը կը դողային և աչքերը անհանգիստ ասդիս անդին կը շրջէր : Ճամբան ասկէ զատ ուրիշ բան շխօսեցան . և երբ գեղը մօտենալով հօրը պալատը սկըսաւ տեսնուիլ, մտաւ Օպքար ծածուկ տեղէ մը հօրը պարտիզին մէջ, և մթաստուեր թփոց տակ պահութելով՝ անոր բնակած սենեկին պատուհաններուն կը նայէր, սրտաթունդ սպասելով՝ թէ վերջապէս ինչ պիտի ծագի : Նոյն միջոցը վարժապետն ալ կառքով դրսի դրան կամարէն անցնելով կը մտնար պալատին բակը . իջաւ կառքէն և մեռելատիպ դէմքով ու բոլոր անդամիքը դողի մէջ սկըսաւ սանդուղէն վեր ելլալ : Իշխանը տեսնալով պատուհանէն վարժապետին կառքով ներս մտնալը՝ սարսափեր էր յանկարծակիի գալով . և երբ սենեկապանը իմաց տուաւ, այն ատեն ալ չկարենալով ծածկել ծառայէն իր բարկութիւնը՝ ըստ դժնահայեաց .

— Շատ յարմար միջոցն է, շուտ ներս դայ :

Ինչպէս անապատի մէջ անդին ճամբորդ մը երբ առիւծի մը գոչիւն մը լսէ կը սոսկայ, նոյնպէս ալ վարժապետը իշխանին ձայնէն ահուեցաւ : Խորին յարդանօք սենեեակը մտաւ, բայց ճանչնալով իր ամօթապարտութիւնը՝ գեռ հաղիւ իշխանին երեսը տեսած, անոր ըսպառնալիքէն զարհուրած, խորամանկաչքերը վարկախեց՝ որոնցմով միշտ խարեր էր առաջ :

— Հիմա ինչ սրտով կը յանդգնիս իմ առջևս երեալու, ըստ իշխանը տժգոյն դիմք . ինչ ըրիր որդւոցս, ինչ պատուղ տուաւ քու անիծած նոր կը թութեանդոճ . ես անմիտս, որ քեզի համար սիրելի բարեկամացս հետ աւրուեցայ, ուր էր թէ այն լճին վրայի փոթորկէն ետքը զքեզ տունէս վարելով, դրացի բարեկամիս՝ այն խոհեմ իշխանին պէս՝ տղայքս ազնիւ ժողովրդապետին ձեռքն յանձնած ըլլայի : Հիմա ինչպէս կ'ու-

րախանայ նոյն իշխանը իր որդւոցը վրայ, իսկ ես ինչպիսի ամօթ կը կրեմ իմ ստահակ զաւկըներուս պատճառաւ։ Ահա քու արդիւնքդ, որուն կը վկայէ նաև այդ քու ցաւալի կերպարանքդ։

Նոյն ատեն ապուշը սեղանի մը կպած կը ջանար պատասխանել, բայց չէր կը ընար պաշտօնին վերաբերեալ բան մը զուրցել։ Իշխանը վերջին աստիճանի արհամարհական աչքով կը նայէր անոր, և տեսնալով որ զրկուած դեսպանը չի համարձակիր բերանը բանալու, այն ատեն ստիպուեցաւ ինքզինքը չափաւորելու. ուստի թէ և զայրացմամբ սակայն քիչ մը մեղմ կերպով ըստաւ.

— Ինչո՞ւ հոս եկեր ես, ի՞նչ պատահեցաւ, շուտ ըսէ, պատասխան տուր, վասն զի կ'ուզեմ և պէսք է ամեն բան իմանամ։

— Ախ, պատկառելի տէր, տղոցմէդ խաւրուած կու դամ հոս...

— Թերես աղաչելու, թողութիւն խնդրելու, ըստ իշխանը, չժողով վարժապետին որ իր կակազելլ առաջ տանի. ես կը մվիթարուէի միայն մտածելով թէ որ մը անոնց ալ աչքը բացուելով պիտի ճանչնան ըրած յանցանքնին. ի՞նչ նախատինք էր այն ինծի ըրածնին, զայն շուտով չեմ կրնար մոռնալ. սրիկայ շար զաւկըներ, պէտք է նախ արգեամբ ուղղեն զիրենք՝ ինծի հաճելի ըլլալու համար, և յետոյ հայր անուաննեն զիս։

— Ախ, լսէ ի՞նձ կ'աղաչեմ, պատկանելի տէր. կ'ըսէր գլայն հեծեծախառն, երիտասարդ որդիքդ յիրաւի քիչ մը ժամանակէ ետև պիտի ջանան աղէկ ըլլալու, և քեզի հետ հաշտուելու, որ իրենց անխոհեմ ընթացքովը վշտացուցին. բայց նախ և առաջ պէտք է դեռ շնորհք մ'ալ ընես, եթէ կը փափաքիս տղոցդ պատիւը պահել։

— Ինծմէ շնորհք այն ատեն յուսալի է, երբ տեսնամ զանոնք որ ըստ փափաքնացս բարւզեր են։

— Այն հիմա անկարելի է։

— Անկարելի է. դու, թշուառական, հոս եկեր ես որ զիս յուսահատցընելով

գերեզման մտցընես. ի՞նչ եղաւ. շուտ ճշմարիտը զուրցէ, ամեն բան կ'ուզեմ գիտնալ։

Գլայն մէկէն ձեռքը զգեստի քսակին մէջ տանելով մեծ կապոցով մը թուղթ հանեց՝ որ պարտքի մուրհակներուն օրինակներն էին, և դողալով դրաւ զայն սեղանին վրայ ու ըստաւ.

— Եթէ այս քանի մը աւուր մէջ չը վիճարուին ասոր մէջ նշանուած պարտքերը՝ նոյն ատեն որդիքդ դատաստան պիտի կոչուին։

— Ո՞վ Ած, գոչեց իշխանը և փութով մէկ մը աչք անցուց մուրհակները. յետոյ տրատում տիսուր նստարանին վրայ նստելով և խառն՝ ի խուռան հաշուելով զանոնք՝ կը գոչէր. Մտքէ չանցնելու բան, այս որչափ գումար է. դու, անպիտան գլայն, մինչև հիմա տեսար զատոնք և ծածկեցիր ինծմէ. ես հոս առանձին քաշուած կ'ապրիմ խնայութեան համար, և յոյս ունիմ որ անոնք ալ ինծի կը հետևին. իսկ արդ դու ասոր հակառակը քարոզեր ես անոնց։ Ապաքէն խարէութիւն է այս. ես մինչդեռ վրադ վատահութիւն ունէի, զայն դու անհաւատարմութեամբդ խանգարեցիր։ Սակայն ես այս ամենը դատաստանի հանելով բանտ գնել կու տամայն մէկը՝ զոր որդւոցս վրայ վերակացու գնելով համալսարան յլեցի։

Հիմա ալ ժամանակը հասաւ որ գլայն թաշկինակը հանէ և պատուհանին առջև երթալով քրտինք սրբել ձեւացընէ. և այսպէս պարտիզին սպասողին նշան կ'ընէր. յետոյ ծունկ չոգած կակազելով, « Գթութիւն, գթութիւն » կը ձայնէր իշխանին, որ բարկութենէն շունչը բըռնուած՝ ոտք կ'ելլար ու կրակուբոց աչօք կը նայէր ողորմելի մարդուն վրայ, որուն սաստիկ զողզողալէն ատամունքը կը զարնէին։

Առանց բախելու դուռը բանալով յանկարծ ներս մտաւ Օպքար նորաձե զգեստով, խարազանը ձեռքը և կօշկացը մարակներն հնչեցընելով. քալուածքը հպարտ էր, զիմացը վրայ յանգդնութիւն կը նշմարուէր։ « Ի՞նչ. հոս կա-

տակերգութիւն կը խաղայ » ըսելով  
նայեցաւ Գլայնի՝ որ սաստիկ կը դողար.  
յետոյ զայրացած հօրը դառնալով կը  
դիտէր անոր հրաշէկ աչքերը և կ'ըսէր.

— Կ'երեայ որ դու շատոնց գեղի մը  
մէջ կը բնակիս . վասն զի այնպէս ուժ-  
գին կը գոչես՝ որ ձայնդ ամեն տեղ  
տարածուեր է և ինչուան պարտէզ կ'եր-  
թայ, ուր զբուանաց համար վեր վար  
ժուռ դալու ատեն դրեթէ բոլոր խօ-  
սածդ լսեցի:

— Դու, անարժան որդի, մի ծաղրեր  
դիս:

— Դեռ աւելի յիմար բաներ կը գոր-  
ծես . այդպիսի վատութիւն քեզմէ չէի  
յուսար, քեզի տեղ ես կ'ամըշնայի այդ  
անվայել աղաղակդ լսելով:

— Ձայնդ գեռ պիտի չիքաշես, ստա-  
հակ որդի:

— Միշտ նոյն խօսքը կը շրջի բերանդ,  
զոր առաջ ալ քանի մը անդամ լսեցի  
վարը . և մասնաւոր անոր համար եկեր  
եմ՝ որ այդ անվայել բառերդ չափի դնել  
տամ, զոր ստէպ կը կրկնես իմ ներկա-  
յութեանս առջին ալ: Ուստի կը խրն-  
դրեմ որ այդ գեղջուկ ու կոպիտ սովո-  
րութիւններդ մէկդի թողուս, քանի որ  
մէշերնիս անախորժ տեսարան մը չէ  
բացուած :

իշխանը ձեռքերը ճակտին զարնելով  
կը փակէր աչուըները, չուզելով հաւա-  
տալ ինչ որ ականջը կը լսէր . ինքզինքը  
խաբել կը ջանար իրը թէ երազ տես-  
նար, եթէ որդւոյն ներկայ յանդուզն  
կերպարանքը ճշմարտութեան վկայ չը-  
լար:

— Օսքար, ըստ դառնացած սրտով,  
ախ, այդպէս կը հատուցանես իմ սի-  
րոյս փոխարէնը . չես վախնար Աստու-  
ծոյ բարկութենէն:

— Ամօթէ և ակնածութենէ զատ ու-  
րիշ բանէ վախ չունիմ. և որպէս զի արդ  
հետաքրիր ծառայից առջե խայտառակ  
չըլլանք, կ'աղաչեմ որ քիչ մը զքեզ  
չտփաւորելով թողուս որ կարենոր զոր-  
ծերնիս աւտրտենք: Յետոյ ձեռքի խա-  
րազանը մէկ մը Գլայնին կոնակը զար-

նելով որ ահարեկ դեռ նոյն տեղը կե-  
ցեր էր, ըստ անոր.

— Արի, ոտք ելիր, չես ամրշնար գոր-  
ծած յիմարութեանդ վրայ . դու ինծմէ  
պատգամաւորի պաշտօն կատարելու  
դրկուեցար, և արդ գալով հոս կը զըտ-  
նամ զքեզ ծնրադիր ահարեկ . այս ը-  
րածիդ արժանաւոր պատիմը յետոյ ան-  
շուշտ պիտի ընդունիս ինծմէ:

Այն ատեն Գլայն կանգնելով գնաց  
հեռու անկիւն մը քաշուեցաւ . Օսքար  
ըստ իր հօրը՝ որուն զիմաց վրայ հետ-  
զհետէ ապշութիւնը կը պատէր .

— Ինծի կ'երեայ որ իմ տեսութիւնս  
քեզի մեծ տաղտուկ կը պատճառէ . ես  
ալ մեր այն վերջին թղթակցութենէ ե-  
տեւ զոր ես ստիպեալ ըրի, բնաւ փա-  
փաք չունիմ հոս երկար ժամանակ ան-  
ցընելու . ուրեմն չուտ պարտքերուն դու-  
մարը միատեղ հաշուենք, որպէս զի  
ամբողջն ալ վճարես անյապաղ . անկէ  
ետքը ես իսկոյն կ'երթամ իմ բանիս, ո-  
րով և դու կ'աղատիս իմ անախորժ  
տեսութենէս :

Եղկելի հայրը այսպիսի դառննախա-  
տանաց տոկալէ ետեւ չիջուց բարկու-  
թեան բոցը, բայց սրտին ցաւը ներսէն  
կը մաշէր զինքը անդադար . աչքերէն  
արտասոք վատկօրէն կը հոսէին . սաս-  
տիկ հեալով կը հառաչէր, որուն աղէտ-  
քըն քարերը անդամ գթութեան կը-  
նային շարժել: Իսկ Օսքար գաղանա-  
միտ որդին անկարեկիր աչք կը նայէր.  
գեռ կ'ուրախանար իր հօրը տկարու-  
թեանը վրայ և կը զմայլէր ձեռք մխած  
զործոյն յաջողութիւնը տեսնալով . և  
անտարբեր պաղ արեամբ պարտքերուն  
հաշիւն ընելով հօրը աւանդեց զայն,  
ըսելով.

— Ա՛ռ բաղդատէ թէ լաւ կրցեր եմ  
հաշուել:

իշխանը ձեռքն առաւ թուղթը և ա-  
նով արցունքը ցամքեցրնելով քաշեց  
զանդակին չուանէն: Սինեկապան ծա-  
ռայն մոտաւ . իշխանը ամեն կերպով իր  
տկարութիւնը ծածկել կը ջանար . սա-  
կայն երբ Օսքար իր տուած թուղթը  
ծառային կը յանձնէր, դեռ ձեռքը կը

դողպողար և բերնէն այս խօսքերս կը լսուէին. «Այս թուղթը գործակալին տար, և մէջը նշանակուածը առ հոսքեր : »

Գլայն ու Օսքար մէկմէկու երեսը նայելով կ'ուրախանային այս բարի յաջողութեանս վրայ . իշխանը նորէն իր տեղը նստաւ . խոր լուութիւն մը տիրեց հոն : Մինչդեռ սենեկապանը դրամի պարկ մը շալկած ներս մնուաւ և դնելով զայն սեղանին վրայ ըստաւ . «Ամբողջ դումարն այս պարկիս մէջ կը բովանդակի : » Օսքար ալ հրամայեց անոր՝ որ տանի զայն վարը կառքին մէջ զետեղէ , և Գլայնի ալ պատուիրեց՝ որ երթայ ծառային հետ և անոր օգնելէն վերջը կառքով պանդոկ երթայ , ուր ձիերը կը ճարակէին , և հոն սպասէ իրեն : Նոյն միջոցը տեսնալով Գլայն իր ազատութեան վայրկեանը՝ ինչ անպատմելի ցնծումի մէջ էր . կէս մէջքով ծռած յարգութիւն տալով կ'երթար հրամանը կատարելու :

Նոյն ատեն հայրը առանձին գտնալով իր որդին .

— Միայն այս անգամ կ'օգնեմ ձեզի , ըստաւ , ասկէ ետքը յոյս մի ունենաք , և ջանացէք շատանալու անով՝ ինչ որ գործակալիս ձեռքով ամսէ ամիս կը յղեմ ձեզի : Եթէ ասկէ ետքը նորէն յանդդիք այսպիսի մնխողովթեան մը ձեռք զարնելու , նոյն միջոցը ես ալ ձեր պատրաստամիտ գանձապետը չեմ ըլլար :

— Ուրեմն դու կ'ուզես հրապարակաւ խայտառակել զմեզ , ըստ Օսքար ծաղքելով :

— Այո , ուրիշ ճար չեմ գտնար ձեր որկորը յազեցընելու :

— Ուրեմն դու մեզի հետ յայտնապէս պայքարիլ կ'ուզես . այս բանս գէշ չէ . բայց ես կը զարմանամ թէ ինչպէս մեզի գէմ կը զինխս , մինչդեռ տպայութեան ժամանակ զմեզ քու փափկութեանդ և մեծահաց կոչունքներուդ մասնակից կ'ընէիր :

Իշխանը սրտի անձուկէն կը հառաչը , և քանի որ որդին լրբարար կը

խօսէր , ինքը աչքերը խոնարհած գետինը կը զննէր . բայց յանկարծ երբ բարձրացընելով աչքերը իրաւախօս և յաղթական Օսքարին երեսը նայեցաւ , արասափէն ու ամօթէն ընելիքը չէր զետեր . վերջապէս զայրագին « զնա , կորիր առջնէս , անիծեալ » , գոչելով , իր սենեկէն դուրս ըրաւ որդին , որ հօրը անէծքը ճակատը՝ վար իջաւ սանդուղներէն և դնաց :

Իր շարունակույն :

## ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐԱՄՔ

Վաճառականութեան սկիզբը փոխանակութեամբ սկըսաւ , որով մարդիկ իրենց ունեցած առատ բաները մէկմէկու հետ կը փոխէին ըստ պիտոյից . ինչպէս , թէ որ մէկը որսորդութեամբ կենդանիներ զարնէր , և երկրորդ մը իր երկրէն պտուղներ քաղէր , եթէ առջնը երկրորդին պտուղներուն ցանկար և երկրորդն ալ առջինին կենդանւոյն մսին կամ մորթին , նոյն բաները իրարու հետ կը փոփոխէին : Վաճառականութեան սկիզբը այս տեսակ փոխանակութեամբ եղաւ , և ինչուան մեր օրերն ալ Ասիոյ և Ափրիկոյ թափառական ժողովրդոց շատերն՝ այս կերպով վաճառականութիւն կ'ընեն : Բայց վաճառելեաց գինը սահմանելու համար տակաւին կերպ մը չըլլալով , մէկ կողման սաստիկ առատութիւնը և միւս կողման ստիպիչ կարոտութիւնը՝ գինը կը սահմանէր : Բայց երբ սկսան մարդիկ մշակութեան պատճառաւ խմբովին բնակիլ , և հանապազօրեայ կենաց զբաղմունքն և պէտքը շատցան ու զժուարացան , և հարստութեան ու հաճոյից սէրն աւելի ևս արմատացաւ սրտերնուն մէջ , պէտք զգացին իրենց ընչիցը և վաճառելի իրաց աւելի արդար գին մը պահանջելու : Նախ չափելու սկսան , մարդուս մարմնոյն զանազան մասերն իրենց չափ առնելով , ինչպէս են թիզ , ոտք , արմուկն և բազուկ . բայց ցորենոյ և պտղոց համար